

# ՄՇԱԿ

Հարեկան դիրք 10 բուրձի, հետ տարվանը 6 բուրձի.  
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մի Բ. հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն).

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Հայտարարութիւնները համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՆԵՐԿԱՅ 1892 ԹԻՒԱԿԱՆԻՆ

20-րդ ՏԱՐԻ

20-րդ ՏԱՐԻ

## ՄՇԱԿ ԻՐԱՅԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.  
«ՄՇԱԿ» տարեկան դիրք 10 բուրձի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 բուրձի, ինն և ութ ամսականը՝ 8 բուրձի, եօթ ամսականը՝ 7 բուրձի, չորս ամսականը՝ 6 բուրձի, երեք ամսականը՝ 5 բուրձի, մի ամսականը՝ 4 բուրձի, երկու ամսականը՝ 3 բուրձի, երեք ամսականը՝ 2 բուրձի, մի ամսականը՝ 1 բուրձի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, Թաթաւաշիւի տանը).

Կարգաւորութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառերն փոխարինվում են 2 կոպեկով.

«Մշակ» առաջին երեւի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն լրագրողների յայտարարութիւնները, մասնացոյցականները և պատժական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնացոյցակի տպագրելը առաջին երեւի վրա արժէ 4 բուրձի, իսկ չորս րոպէս երեւի վրա՝ 2 բուրձի:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

### ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Եկեղեցու բարեփոխութիւն. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Մեր պատգամաւորը. ինքնիկ եկեղեցական ընտրութիւնների աւելում. — Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թուրքիայի հայերի պատգամաւորները. Եկեղեցական իրաւունք. Պարոնատան. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳՐԱՆԵՐ. — ԲՈՐՄԱ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԱՐԱԿԱՆ. Գիտ. նախկին նամակներ.

### ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՓՈՒԹԻՒՆ

Շատ սակաւ ազդերն է վիճակված եղել մարդկային ամբողջ պատմութեան ընթացքում. ստեղծել ինքնուրոյն օրէնսդրութիւն, ինքի այդ օրէնսդրութիւնը քաղաքացիական, թէ կրօնական:

Հին հռոմէականները ազգային հանձարը ստեղծել է քաղաքացիական և քրէական

հռոմէական օրէնսդրութիւնը, որը մինչև օրս կրում է հռոմէական իրաւունք անունը. սեմիտական ցեղերի հանձարը, հըրէաների ու արաբների հանձարը՝ երեք անգամ ընծայել է մարդկութեանը կրօնական ինքնուրոյն օրէնսդրութիւնները, — մովսիսականութիւնը, քրիստոնէութիւնը և մահմետականութիւնը. Ֆրանսիան, իր մեծ յեղափոխութեան ժամանակ մշակել լայն աշխարհ է բերել մի ինքնուրոյն, ամփոփ քաղաքացիական օրէնսդրական սիստեմ, որն այնուհետև հռչակվել է «Code Napoléon» օրէնսդրութիւն անունով. գերմանական ցեղի հանձարը, ընթացիկայի ժամանակ, կարողացել է ստեղծագործել մի ինքնուրոյն կրօնական օրէնսդրութիւն, վերանորոգելով, մաքրելով կաթոլիկութիւնը և այդպիսով ստեղծել բողոքականութիւնը:

Մարդկութեան ուրիշ ցեղերին ու ազգե-

րին վիճակված չէ եղել հանձարի այնպիսի ստեղծագործող ուժ, որ նրանք կարողանային մարդկութեան պատմութեան ամբողջ ընթացքում ստեղծագործել ինքնուրոյն օրէնսդրութիւններ, ինչին այդ օրէնսդրութիւնները քաղաքացիական թէ կրօնական: Այս, ուրիշ ազգերն ու ցեղերը կարողացան միմիայն ընդօրինակել ըստ ստեղծագործող ազգերի լայն աշխարհ քրէական օրէնսդրութիւնները և աւելի կամ պակաս ազդողութեամբ իրացնել այդ օրէնսդրութիւնները, յատկացնելով ընդունած օրէնսդրութեանն իրանց ազգային բնաւորութիւնը, իրանց ինքնուրոյն, ցեղական, բնաւորել գոյնը:

Այդ տեսակ ազգերի կամ ցեղերի շարքին պատկանում ենք և մենք, հայեր: Ամենահին ժամանակներում հայերը կարողացան իրանցիկ պարսկական հին կրօնական սիստեմը, արեւապաշտութիւնն ու կրօնապաշտութիւնը և իրանց այդ ընդունած կրօնական օրէնսդրութեանը՝ առաջին ինքնուրոյն, բուն հայկական բնաւորութիւնը, ապա, քրիստոնէութեան յայտնվելուց առաջ շփվելով յունաց քաղաքակրթութեան հետ, հայերն ամենից լաւ կարողացան իրանցիկ զեղաբանական, բանաստեղծական ոգով լի յունաց զիցապաշտութիւնը և այդ կրօնին իրանց ինքնուրոյն, բուն հայկական բնաւորութիւնը յատկացնել: Վերջապէս մեծ կրօնական Օրէնսդրութիւնը, Յիսուսի յայտնվելուն պէս, հայոց ազգը ամբողջ մարդկութեան մէջ առաջին է եղել, որն ամբողջութեամբ վերանորոգել է կրօնականը, վերջապէս, իրան յատուկ առաջադիմական ոգու շնորհով անմիջապէս ընդունել, իրանց զիցապաշտութիւնը, և օտար հոգի վրա ծնված այդ կրօնական օրէնսդրութեան սիստեմին՝ առեւտր իր ազգային ինքնուրոյն բնաւորութիւնը, իր հասկացողութեանն ու պահանջներին յատուկ կերպարանքը, ստեղծելով հայկական, լուսաւորչական եկեղեցին:

Սակայն այդ ազգային եկեղեցին, հայկա-

կան այդ սկզբնական կրօնական օրէնսդրութիւնն այն չէր, ինչ որ է ներկայումս. նա աւելի պարզ էր, աւելի ամփոփ, ժամանակի պահանջներին աւելի համեմատ, ժողովրդի հոգեւոր, մտաւոր ու բարոյական վերաճութեան գործին աւելի նպաստաւոր:

Կարելի անցան և այդ դարերի ընթացքում կրօնական սկզբնական օրէնսդրութեան պարզ, ամփոփ, մաքուր շինուածքը հետզհետեւ բարդացել, բեռնաւորվել օտարմունտ աւելուածներով, հետզհետեւ կորցնելով իր սկզբնական ինքնուրոյնութիւնը:

Կրօնական, դաւանաբանական, էական մասը՝ ի հարկէ, նոյնը մնաց, սակայն, կրօնը, եկեղեցու այդ անփոփոխ կօրիզը, հետզհետեւ շրջապատվել եկեղեցական-կրօնական, իրաւագիտական-փարսեական այնպիսի օտարմունտ բարդութիւններով, որոնք կերպարանաւորվելով սկզբնական եկեղեցական պարզ շինուածքը, շատ և շատ հեռացրին մեզ առաքելական, քրիստոնէական սկզբնական դարերէն:

Կա եր միշտ մեր անկեղծ և խորին համոզմունքը և այդ էր պատճառը, որ «Մշակ» իր 19 տարեկան գոյութեան ընթացքում, երբ խօսք էր ընկնում մեր եկեղեցու մասին, — չէր դադարում անընդհատաբար և համարձակ տոկոսնութեամբ կրկնել «վերադառնա՛նք մեր սկզբնական և մաքուր լուսաւորչական եկեղեցուն»:

Կա եր, այդ, մեր եկեղեցու բարեփոխութեան հարցի մասին «Մշակ» 19 տարեկան գոյութեան ընթացքում մեր մշտական նշանաբանը: Այս, կրօնը մնաց նոյնը, բայց փոխվել է եկեղեցին:

Լաւ ըմբռնեցէք այդ երկու բառերի ահագին տարբերութիւնը. կրօնը՝ էութիւնն է, — եկեղեցին՝ ձևն է. կրօնը հոգին, շունչն է, — եկեղեցին՝ կեղեւն է. կրօնը՝ վարդապետութիւնն է, — եկեղեցին՝ այդ վարդապետութիւնն է իր մէջ պահանջակող կանոնական-իրաւագիտական սիստեմն է. կրօնը՝ աստուածային դադաւարն է, — եկեղեցին՝ այդ

Կարմիրն առում էր, որ ձևերի շարքում, որոնք անհնարելի կերպով դարձանում են կապկածեկեղեցի մինչև մարդը, անկարելի է որոշել, որ կէտի վրա իսկապէս սկսվելը գործ ածվել մարդ խօսքը: Իսկ մեր հեղինակն իր սրբալիտ ոգով բացատրում է, որ եթէ մենք ընդունենք այդ անկատելի աստիճանադարձը, այն ժամանակ կը ողջանայ դաւադարանութիւնն ոչ թէ միմիայն մարդու ու կապի մէջ, այլ և սեւ ու սպիտակի մաքր ու սառելի մէջ, այլ և վերջապէս կանոնաւորան բնութեան օրէնքների այն դարմանալի սահմանները, որոնք ճիշդ որոշված են գիտութեամբ և որոնք խաօսը դարձնում են կօսման, անկեղծ — վերջանալի և տալիս են մեզ կարողութիւն հայտնաբերել, խօսելու և գիտնալու: Ինքուր, նա վերջացնում է, մեր Ռուբիկոնն է և ոչ մի կենդանի չի համարձակվի անցկենալ նրանով:

Երբ մենք վերադառնում ենք մի լեզու, հեռացնելով բառերից նախադաս, յետադաս և այլն մասնիկներ, մենք վերջապէս հասնում ենք մի այնպիսի մեղացորդի, մի որոշ էութեան, որն այլ ևս չէ վերադառնալ: Իսկ եթէ սկսենք հաւաքել այդ մասերը, նորից կը կազմենք լեզուն: Ինչպէս որ բնախօսութեան մէջ գործարանական նիւթի ամենալեւնիւն տարրը խորշիկն է, նոյնպէս լեզուագիտութեան մէջ արմատն է: Եթէ այդ բանի մէջ նկատվում է բնախօսութեան և լեզուագիտութեան նմանութիւնը, արդէն հետևեալ նրանց քաղաքական նրանք միասնապէս հետևում են միմեանցից, բնախօսը չէ բնախօսանալով միակերպ խորշիկներով, նա այդ գործարանական մասնիկները վերադառնում է վերադառնալով, հասնում է քիմիական էութիւններին, որոնց ընդուն-

### ԲԱՆԱՍԱՐԱԿԱՆ

### ԳԻՏՆԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Մաքր և բնութեան ուսումնասիրութեան մէջ կայ մի տեսակ գոգնութեան ինչպէս որ բնութեան դարձաբանութեան կատարվում է տեսակ-ն ուրիշ միջոցով, նոյնպէս մաքր գաղափարները կատարվում է առնչելով միջոցով: Մ. Միլլերը ասում է, որ լեզուն ունի պատմական սկիզբ, նա հայտնաբերող քաղաքների ընթացքում մարդու կատարած աշխատանքի արդիւնքն է, այնպէս որ եղել է ժամանակ, երբ գրվել են լեզուի մեծ տաճարի առաջին քարերը, իսկ մինչև այդ ժամանակ մարդն եղել է առանց լեզուի, ուրեմն և առանց բանականութեան:

Համալսարանում բնական պատմութեան պրոֆեսորները համարեա միաձայն միշտ մեզ քաջատրուում էին, որ Կարմիրն էլօլիցիայի (այս բառը հայերէն թարգմանել անհնարին է՝ նա նշանակում է մի և նոյն ժամանակ և փոփոխութիւն, և անուն, և զարգացում բառերը) ստեղծողն է, որն իր «Տեսական ծագում» և «Բնական ջոկողութիւն» գրութեան մէջ նա առաջինն է նշանակել բնութեան մէջ կատարվող կերպարանաւորութիւնները: Մ. Միլլերը սաստիկ դէմ է այդպիսի կարծիքին: Նրա ասածին համեմատ՝ ով որ ուսումնասիրում է լեզուի գիտութիւնը՝ անշուշտ էլօլիցիայի հետ. նրա աչքի առաջ լատիներէն

լեզուն դառնում է ֆրանսերէն, սակսոներէն — անգլիերէն, սանսկրիտերէն — ռեյնլանդերէն. արեւելեան լեզուները կերպարանաւորվում են ասորիւն, բաբելոնիւն ու լեզուներ, նոյն փոփոխութիւնները նկատվում են բոլոր լեզուներէ մէջ: Նա բերում է Հէլլադի կարծիքը, որով այդ երեւի գիտնականը, չը նայելով որ նա սաստիկ դարձվում է, հաստատում է, թէ փոփոխութեան պատմութեան մէջ վաղուց յայտնի է, որ օր թէ միայն յունաց փոփոխութեանը, այլ մինչև անգամ Հնդկաստանի իմաստունները շատ լաւ գիտէին թէ ինչ է էլօլիցիան:

Շատերը Կարմիրն վերագրում են այն միտքին, թէ բոլոր կենդանի էակներն առաջ են եկել անգործարանական նիւթից, թէպէտ այդ դադար փարն աւելի պատկանում է դարվանականներին, քան թէ Կարմիրն: Սպէսներ կարծիքով որը համարեա բոլոր բնագիտների ընդհանուր կարծիքն է, կենդանու և ոչ կենդանու մէջ եղած անգործնել, գիտութեան առաջադիմութեան հետ, աւելի և աւելի փոքրանում է վերջին կէս դարի ընթացքում քիմիկոսներին աջողվել է շինել մի քանի հատ գործարանական նիւթեր, և այս հանգամանքը նրանք եզրակացնում են, որ գործարանական և անգործարանական առարկաները միմեանց շատ մօտ են: Բայց յիշելով չէ կարելի չը համաձայնել Մ. Միլլերին հետ, թէ այդպիսի դադար կազմել միմիայն այն բանի պատճառով, որ լաբորատորիայում սկսել են չի-նել գործարանական նիւթեր, այն էլ ոչ թէ կենսական, գործարանաւոր (организованный) նիւթեր, այլ լոկ գործարանական (органический) մեծ մոլորութիւն է:

Այստեղից յետոյ նա յարձակվում է Կարմիրն միւս մաքր վրա, թէ մարդն առաջ է եկել կապիկից, այսինքն կենդանուց: Եթէ Կարմիրն, ասում է նա, նոյնպէս ծանօթ լինէր փոփոխութեան կան մաքր էլօլիցիայի հետ, որպէս նա ծանօթ էր բնութեան էլօլիցիայի հետ և եթէ նա ծանօթ լինէր Կարմիրն «Պարզ բանականութեան քննադատութեան» հետ, նա կը տեսնէր, որ մարդու մէջ կայ մի բան, որը չէր կարելի ժամանադէմ մարդու ծագման մասին: Այդ բանը նրա լեզուն է, որով նա դանդաղանում է բոլոր կենդանիներից: Լեզուն մարդկային ցեղի յատկութիւնն է, և նրա հետքը չէ կարելի գտնել ոչ մէկ ամենաբարձր դարձաբան կենդանու մէջ — ապա ուրեմն մարդու տոհմագրական ծագումը կենդանուց հաստատված չէ: Կենդանուց դէպի մարդն անցումը առհասարակ անըմբռնելի է: Անտառային տեսակների ամենազարգացած կապիկ և մարդու մէջ անդունդը կարող է լինել չնչին, իսկ կապիկի ու մարդու (ամենահասարակ կենդանի) մէջ — ահագին, բայց միմիայն անտառային կէտից այս տեսակ հարցը չէ կարելի որոշել. պէտք է ի հայել առնել և մարդուն յատուկ դանդաղանութիւնը, — լեզուն: Այսպիսով Մ. Միլլերը եզրակացնում է, որ եթէ վերցնենք մէկ կողմից ամենայն ինչ, որ անուանվում է կենդանի և միւս կողմից՝ մարդը, մեզ համար անհասկանալի կը լինի, թէ ինչպէս արդեօք մի կենդանի կարող է դարձանալ մինչև լեզուն. ապա մի այլ տեղում նա ասում է, «որ մարդը կենդանի է, ապացոյցներ հարկաւոր չեն, իսկ որ մարդն առաջ է եկել միւս կենդանիներից — այսանշուն է ապացոյցներ»:



գաղափարը որոշ սխառմով տակ դնող մարդկային օրենսդրական-վարչական հաստատությունն է:

Առաջինը՝ գաղափարն է, — երկրորդը՝ հաստատությունն է. առաջինն անփոփոխ է, ինչպես շատ ճիշդ ասեց «Ամուսնական խնդիրներ» գրքի հեղինակն իր առաջաբանի մեջ, իսկ երկրորդը՝ փոփոխական է և մեզանից է կախված յարմարեցնել մեր ժամանակակից պահանջներին եկեղեցու իրաւադրական-կանոնական, նրա անտեսական-վարչական կարգավորությունները:

Եւ երբ որ մշտական, անփոփոխ, յաւերտեանական գաղափարն իր մէջ բովանդակող ձևը, կազմակերպութիւնը հնացել, երկար դարերից յետոյ անյարմար է դարձել ժամանակակից մարդկային հասարակութեան բարոյական և մտաւոր պահանջներին, մեր տեսչանքն է՝ մենք աւելի կասկեմք՝ մեր պարտաւորութիւնն է՝ որոնել և գտնել մարդիկ, որոնք կարողանային բարեփոխել այդ կազմակերպութիւնը, նորից կարողանային առաջնայ կենդանարար շունչը փչել անկենդան կեղևի մէջ, կամ աւելի լաւ ասենք՝ կարողանային մաքրել զուտ գաղափարը նրան միջնացնող, նրան նսեմացնող ձևական, ժամանակի պահանջներին այլ ևս չը համապատասխանող արտաքին կազմակերպութիւնից, որպէս զի դրանով նպաստելին մարդկային հասարակութեան երջանկը կուտայ, որին արդեւք է լինում զուտ գաղափարը կյանքի հետգծեալ բարդիւղ արտաքին ձևականութիւնը:

Եւ այդ պահանջը աւելի քան արդարացի է. չորրորդ դարից սկսած մինչև քսաներորդ դարը շատ բան է փոխվել. ժամանակի հոսանքին հետ միասին փոխվել են՝ և ժողովրդի նիստ ու կացը, ժողովրդի կենսական պահանջները, մարդկային հասարակութեան բարոյական և մտաւոր աշխարհայեցողութիւնը, նրա բարոյական, հոգեւոր ու մտաւոր ձգտումները. և ամեն հաստատութեան կազմակերպութիւնը բնականաբար պէտք է յարմարվի այդ պահանջներին, որպէս զի արդեւք չը լինի մարդու երջանիկ կեանքին, քանի որ երբեք չը պիտի մոռանանք, որ մարդկային ամեն հաստատութիւնները մեզ համար, մեր երջանկութեան համար գոյութիւն ունեն, և ոչ թէ մենք, մարդիկ, գոյութիւն ունենք մեր միանգամ ստեղծած հաստատութիւնների համար:

Չը մոռանանք, որ մենք ենք ստեղծել մեր եկեղեցին, կամ գոնէ իրացնելով օտար հրէական հողի վրա ստեղծած այդ կրօնական օրենսդրութիւնը, մեր պահանջների համեմատ, մեր երջանկութեան համար վերադառնալով ենք այդ հաստատութիւնը, այդ օրենսդրական սխառմը: Եւ

եթէ մի ազգի հանձնարը կարողացաւ չորրորդ դարում ստեղծել իր համար մի ամբողջ կրօնական-եկեղեցական շինուածք իր երջանկութեան համար, — միթէ նոյն ազգի հանձնարը սպառվել, մեռել է, որ նոյն ազգի հանձնարը տասն և հինգ դարերից յետոյ, քսաներորդ դարի նախընթաց օրը չէ կարող, իրաւունք չունի բարեփոխել այն, ինչ որ այդ նոյն շինուածքի մէջ այսպէս թէ այնպէս անյարմար է իր ժամանակակից պահանջներին, արդեւք է լինում իր անհրաժեշտ և երջանիկ կեանքին:

Միթէ այն, ինչ որ ստեղծել է չորրորդ դարի հայ ազգի սերունդը, չէ կարող փերանորոգել նոյն ազգի քսաներորդ դարի սերունդը: Միթէ, կրկնում ենք, սպառվել է այդ ազգի մէջ ստեղծագործող հանձնարը, կամ մենք պէտք է հրաժարվենք սեփական նախաձեռնութեան իրաւունքից, որն ազատորէն վայելում էր չորրորդ դարի սերունդը:

Ոչ, եթէ շատ դարերից առաջ մենք ենք ստեղծել մեր եկեղեցին, ուրեմն մենք էլ կատարելա իրաւունք ունենք դարեր անց՝ ներուց յետոյ, նորից վերանորոգել, կամ գոնէ բարեփոխել մեր ստեղծած հաստատութիւնը, մեր այժմեան պահանջներին համեմատ: Ինչի մենք, այս րօպէիս, աւելի պակաս մարդկային իրաւունքներ ունենանք, քան ունեցել է մեր ազգի չորրորդ դարի սերունդը:

Եթէ կը հերքենք մեր այդ իրաւունքը, — դրանով կը հերքենք ուրեմն և մշտական առաջադիմութիւնը: Իսկ հերքելով ի դեպ՝ յի, գաղափարի անընդհատ առաջադիմութեան հնարաւորութիւնը, — հարկադրված կը լինենք, ուրեմն հերքել և ի դեպ պաշտօնէրի գոյութիւնը, որոնք ամեն մէկը իր ժամանակին, առաջ են մղում մարդկութիւնը դեպի անընդհատ առաջադիմութիւն:

Եւ եթէ այն եղրակացութեանը հասանք որ հերքեցինք, ուրացանք ժամանակակից իրաւունքը և պաշտօնէրի գոյութիւնը, ինչպէս են Ներսէս Արքեպիսկոպոս, Մկրտիչ Յովսէփեան ու Արիստակէս Արքեպիսկոպոս, — ուրեմն պէտք է ուրանայինք և այն մեր հին և իրանց ժամանակին խաւար ժողովրդից և իստիկից՝ դէտ խաւարածներից նոյնչափ հալածված՝ Գրիգորների, Սահակների, Մեսրոպների, Մովսէսների, ու Ներսէսների գոյութեան օգտաւէտութիւնը:

Գ. Ա.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՊԱՏՄԱՍԻՈՐԸ

Մօտ է մայիսը, որի առաջին օրերում պիտի

փոքրթիւն կանկարի բաղադրութեան ու վերլուծութեան միջոցով:

Շատ հետաքրքրել է յիշեալ գրքի այն մասը, ուր հեղինակը բացատրում է իր սխալական դասակարգութիւնը, որով սանսկրիտական բոլոր արմատները նա դասաւորում է համաձայն իրանց նշանակութեան: Այդ արմատները, նրա ասկով, արտայայտում են սկզբնական հասարակական գործողութիւններ նախնական հասարակական մարդկանց և դրութիւնների փոքր ի շատ այդ գործողութիւնների հետ կապված: 121 գաղափար կառուցում են ամբողջ այն հարստութիւնը, որի միջոցով արտայայտվեցան հնդկաստանցու խնդիր մէջ ծագած բոլոր մտքերը: Այս թէ ինչ խօսքերով նա յայտնում է իր այդ երեւելի միտքը. «Ամենայն բան, որով մենք հիանում ենք, պարծենում ենք — բոլոր մեր մտքերը, բանաստեղծական, փիլիսոփայական թէ կրօնական, ամբողջ մեր գրականութիւնը, ամբողջ մեր մտաւոր և հոգեւոր կեանքը շինված է այդ 121 աղբիւրից: Եւ չէմ մոռանում այստեղ ծարարապահանջներին, բանաստեղծներին, մարդաբաններին ու փիլիսոփայներին, բայց ինչ կը լինին ծարարապահանջները առանց ճարի ու աղբիւրի: Մի քանի տարի արանց առաջ լեզուաբանութիւնը դարձաւ աշխարհը, որ անդիմաբար բառարանի մէջ գտնվող 250,000 բառերը կարող են բերվել 1000 արմատի: Լեզուագիտութիւնը գնում է առաջ և մեզ համոզում է, որ իւրաքանչիւր միտք, որը ծնվում է մարդու խնդիր մէջ, կարող է բերվել 121 գաղափարի, բերաւոր մտքեր, որոնք եւսում են Հնդկաստանի մտաւոր փետակի մէջ, ոչ այլ ինչ

ինի համայն հայոց կաթողիկոսի ընտրութիւնը, համազգային ժողովով ու ԼՂՄիաձեռնում:

Երբ ընտրութիւն ենք ասում, ճանաչողութեան և կամքի մի գործ ենք հասկանում: Երբ ընտրութիւնը կատարվում է այդ երկու գործունեւում, այսինքն ճանաչողութեան և կամքի ձեռքով, նա լինում է գիտակցութեան մի գործ, և ոչ թէ բաղդի որ և է բերմունք, կամ ինչ և է կողմնակի թեւադրութեան արդիւնք: Մենք մաղթում ենք, որ բաղդը կամ պատահական ներշնչմունքը չազդեն մեր համազգային ժողովի ընտրողների վրա: Մենք մի և նոյն ժամանակ բարոյական իրաւունք ունենք մեր ընտրողից պահանջելու, որ նա ու ԼՂՄիաձեռնի համազգային ժողովում ներկայացնէ իր անձի մէջ մեր կամքը, մեր ցանկութիւնը: Նա մեր երեսփոխանն է, ուրեմն և պարտք ունի հաւատարմի և հարադատ մնալու իրան հաւատացող ընտրողների կամքին: Նրա պաշտօնը ընտրողների կամքը ներկայացնելն է. նրա պարտաւորութիւնը ընտրողների ակնարկներին ծագելը, նրանց ակնկալութիւններն արդարացնելն է:

Այդպիսի գիտակցութեամբ ընտրողները հարկաւ իրանց ներկայացուցիչ կընտրեն այնպիսուն, որի դաւանութիւնը՝ սկզբունքներով, որի տեսութիւնները, որի յայտերը նոյնն են, ինչ որ իրանցն է: Այսպիսի մի ընտրելու էլ պարտքն է հաւատարմի մնալ և արդարացնել իր վրա դրված յոյսերը:

Համազգային ընտրողական ժողովը ուղարկվողին մենք պատգամաւոր անունն ենք յատկացրել, և դա բաւական հին կոչում է: Պատգամաւորը, բառի ընդ նշանակութեամբ, խօսք, կամք, պատէր տանող է առաջողի կողմից: Այս նշանակութեամբ էլ մենք այսօր հասկանում ենք այդ բառը:

Մեր պատգամաւորը մեր կամքի, ցանկութիւնների, շահերի ուղղակի թարգմանն է: Ով լաւ է ըմբռնում մեր կամքը, ցանկութիւնները, շահերը, նա պիտի լինի մեր պատգամաւորը:

Եթէ մենք լաւ ենք ըմբռնել մեր կարիքները և այդ կարիքները լցնելու միջոցները, մենք կը գիտենանք ճանաչել և ընդունել այն անձին, որն ամենայն պարզութեամբ ուղղակի դիմում է դեպի նպատակը, ընտրողների պատգամը համազգային ժողովը տանելու:

Այդ ամենակարգի ընտրութեան համար վրա-տահութեան արժանաւոր, վստահութիւն վայելող մի պատգամաւոր է պէտք: Մեզ է մնում հիմա, ընտրողներ, արտայայտել մեր կամքը, մեր քուէներով հուշակել մեր ցանկալի պատգամաւորին:

\*\*\*

ԼԻՆԵԼԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆԴՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՅԹՈՎ

Թեմական առաջնորդի կանոնները հրաւիրում

են, եթէ միայն 121 հիմնական իրէաների յետադաք, այդ այնպիսի մի միւս քայլ է, որի մասին հաղել թէ կարող էին երազել փիլիսոփայները:

Լեզուն մտքի գործարանն է, ինչպէս որ աչքը տեսողութեան գործարանն է, ականջը — լսողութեան: Բառերը մտքեր են, իսկ մտքերը — բառեր: Ամեն մեր գաղափարը իրագործվում է անունների մէջ: Մահա Միւլլեր ասում է, որ ամբողջ աշխարհը իր համար դառնում է աւելի պարզ, երբ նա տեսնում է նրան բառերի մէջ, որոնք մտքերն են:

Բառերի մէջ մի բան կայ, որը խաւարում է որոշումից և որին Մ. Միւլլերը անուանում է բառերի հոտ. բառերի այդ յատկութիւնն արտայայտվում է նրանում, որ զանազան ժամանակ, զանազան լեզուներում, զանազան մարդիկ նրանց գործ են անում զանազան նշանակութեամբ: Այսպէս՝ կան շատ բառեր, որոնք փոքր առ փոքր կորցնում են իրանց իսկական նշանակութիւնը, ընդունում են հակառակ նշանակութիւն և կամ բոլորովին մոռնում են, դուրս գալով գործածութիւնից, առաջ ստֆիստէս կոչումից աւելի պատաւոր բառ չը կար. ամենամեծ և խնդր մարդկանց տալիս էին այդ կոչումը՝ Սոկրատեսին և Պլատոնին, մինչև անգամ տիեզերքի ստեղծողին, իսկ յետոյ ժամանակի ընթացքում նա սկսեց ընկնել, մինչև որ այդ խօսքը դարձաւ անգամ վիրաւոր: Այդպիսի դէպքերում, մի բառի ճշմարիտ միտքը հասկանալու համար հարկաւոր է զինվել այդ խօսքի ծագման և զարգացման պատմութեանը:

Առաջ քան վերջացնենք մեր յօդուածը, կամեն

են ծխատէր քահանաներին իրանց ծխականների անուանացուցակը կազմել և առաջարկել նախադաս քահանային, որը պիտի ստուգէ նրա ճշգրտութիւնը: Անցեալ անգամ մենք ակնարկեցինք, թէ ինչ և ինչ կարող է պատահել, եթէ ցուցակում մոռացված, կամ որ և է խորհրդով բաց թողված լինի այս կամ այն ծխականի անունը: Հարկ ենք համարում այժմ աւելացնել, թէ ընտրութիւնների կանոնաւորութիւնը խնդրի տակ չը ձգելու, բողոքների դուռ բաց չանելու համար, պէտք էր անուանացուցակը վաղորդ հրատարակել, որպէս զի մոռացված, կամ բաց թողված ծխականը կարողանար իր իրաւունքը հաստատել և ընտրութեանը մասնակցել, իր բարոյական և իրաւական պարտքը կատարելու համար:

Այդպիսի մի ցուցակ մինչև օրս հրատարակված չէ: Կը հրատարակվի, արդեւք: Հաղիւ թէ: Եթէ կանոնները, մի անհրաժեշտ գործիք՝ որով միայն գործել պատուիրված է մեզ, չեն հրատարակված, անուանացուցակն էլ երեւի չի հրատարակվի:

Նոյն կանոնները պատուիրում են բաժանել, նախագահ քահանայից առաջուց նշանակված երկու օգնականների ձեռքով, թաւահամարված տոմսակներ, ընտրելիների անունները գրելու համար: Փութարկութեան այսպիսի մի ձև, լացի քուէարկութեան գաղափարը վերացնելուց, ունի նաև ընտրողին բռնադատելու ընտրութիւնը: Ընդունենք մի րօպէ, որ մէկը վաղուց ջնկված տոմսակ-բաժանողին խոստացել է, նրա խնդիրը չին տեղիք տալով, ընտրել այս և այն անուն պարունակներ, բայց սակայն այդ խոստումը մարդկորէն տկարութեան մի արդիւնք է և խոստացողի ցանկութեանը հակառակ: Գաղտնի քուէարկութեամբ նա ազատ կարող է իր ցանկութեանը, իր դատողութեան թեւադրածին հետեւել, բայց նա այդ օրինաւոր միջոցից զրկված է, երբ իրան յանձնված տոմսակը թաւահամար ունի և բաժանողն էլ կարող է այդ թաւահամարը միտք պահել, ուրեմն և նրա վրա դրված անուններին իմանալ: Արդ, ընտրողը, եթէ կախումն էլ ունի կամ որ և է ակնկալութիւն տոմսակը՝ իրան ստուգից, բռնադատված է լինում անպատճառ խոստացված անունները գրել, եթէ խոստումը կտրել և խնդրողի հետ խոսկլելը ծանր է գալիս իրան:

Թաւահամարված տոմսակը ընտրութիւնների համար նորաձև բան է և որ և է օրինաւոր տեսակէտ չէ կարող ունենալ արդարանալու համար: Վերջապէս ընտրողները կարող են այդ թաւահամարը կտրել զէն գցել:

Ա. Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունիարի 6-ին կուր գետում խնդրվածների

նում ենք, Մ. Միւլլերի այդ գրքի տպաւորութեան տակ, մի երկու խօսք ասել հայերէն լեզուի վերաբերեալ մի կենսական հարցի մասին. երբեմն պատահում է լաւ տրտուհներ, թէ «Մշակը» գործ է անում եւրօպական լեզուներից վերջածած բառեր, թէ մեր լեզուն այնքան հարուստ է, որ ամեն մտքի, գաղափարի կամ առարկայի համար կարելի է գտնել պատարաստի բառ: Գիշտե՛ք թէ հայերէնը ամենահարուստ լեզուներից մէկը լինի, բայց այդ հանգամանքը չէ կարող ապացոյց լինել, որ միւս, գուցէ և ոչ հարուստ մի լեզու չի ունենայ այնպիսի բառեր, այսինքն այնպիսի մտքեր, որոնց թարգմանելու համար հայկական բառարանի մէջ արմատներ չը կան: Եթէ անդիմաբար մէջ, Մ. Միւլլերի ասելով, կան այնպիսի հասկացողութիւններ, գաղափարներ, որոնք չեն կարող արտայայտվել ամասկրիտական արմատներից վերջածած բառերով, ապա ինչպէս կարելի է պահանջել, որ նոյն իսկ այդ անդիմաբար յատուկ բառերը հեղուկութեամբ արտայայտվեն հայերէն արմատներով, քանի որ սանսկրիտերէն լեզուն հայերէնից ոչ պակաս հաւուստ է: Այս, կարելի է շատ հմուտ լեզուագետ լինել և շուտաւարձ մնալ երբեմն մի բառի թարգմանութեան առաջ: Ընդհակառակը, առաւել յարմար և իրաւացի է օտար լեզուի մէջ դարեւրով պատարաստված բառը ուղղակի վերցնել, իրացնել, հայացնել, քան թէ խնդրել զօտ տալ նոր բառեր հարկելու վրա:

Ս. Պետերբուրգ.

Գր. Տգր.







